

ՏԻՉԻՆԱՅԻ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔ

ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԷՍՔԻԶ

Նախագծի հիմնական գաղափարը բխում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծում նախանշված հատակագծային գոտիների կազմակերպման հիմնադրույթային սկզբունքից, որը կանխորոշում է հատակագծային շրջանների խոշորացում, միավորված հատակագծային գոտիների կազմակերպում և ազլումերացիայի հետ կապող հիմնական հատակագծային ուղղությունների շուրջը դրանց կենտրոնացում, այդ ուղղությունների նկատմամբ զարգացած կենտրոնական գործառույթների և տրանսպորտային հաղորդակցությունների հավասարակշռված բաշխում:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի՝ նախագծվող թաղամասի հարավով նախատեսվում է արագընթաց մայրուղի (Տիչինայի փողոցից դեպի հյուսիս ընկնող տարածքում), որը Երևանի հեռանկարային արագընթաց մայրուղային համակարգի բաղկացուցիչ մասն է: Նշված մայրուղին ապահովում է անմիջական տրանսպորտային հաղորդակցությունը Երևանի և Արմավիրի տարածաշրջանի բնակավայրերի միջև: Բացի այդ, նախագծվող թաղամասի մերիդիոնալ ուղղությամբ անցնում է համաքաղաքային նշանակության մայրուղի:

Տարածքում նախատեսվող կառուցապատումը դիտարկվում է որպես համաքաղաքային նշանակության բազմաֆունկցիոնալ համալիր, որը կազմավորում են հասարակական և զվարճանքի օբյեկտներ, զարգացած գործարարական-բանկային, հյուրանոցային, մարզական համալիրներ, խառը կառուցապատման բնակելի թաղամասեր՝ 10-12 հազար բնակչության հաշվարկով, համաքաղաքային նշանակության կանաչ զանգվածներ: Հատակագծային գոտում այսպիսի բազմաֆունկցիոնալ կենտրոնի կազմակերպումը կնպաստի Երևանի կազմավորված համաքաղաքային կենտրոնի բեռնաթափմանը:

Բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցապատման մակերեսը կկազմի մոտ 121 000 քմ, իսկ մշտական աշխատողների թիվը, համաձայն գնահատականների, կարող է հասնել 25-30 հազար մարդ:

Նախագծով առանձնացվում են հետևյալ հիմնական գործառույթներն ու գոտիները.

- ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ - 21.2 ՀԱ
 - ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՏԻՆԵՐ- 4.5 ՀԱ
 - ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՏԻՆԵՐ -3.2 ՀԱ
 - ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱԶ-46.2 ՀԱ
 - ՍԱՆ. ՊԱՇՏ. ԳՈՏԻ՝ ԷԿՈՏԱՐԱԾՔՆԵՐՈՎ – 33.9.2 ՀԱ
 - ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱԶ – 10 ՀԱ
 - ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՏԻ - 3.5 ՀԱ
 - ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԳՈՏԻ – 5.7 ՀԱ
 - ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ - 6.1 ՀԱ
 - ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ- ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՏԻ - 7.3 ՀԱ
 - ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ ԵՎ ՄԹԵՐԱՅԻՆ ՇՈՒԿԱ - 3.9 ՀԱ
 - ԿՈՄՈՒՆԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 7.3 ՀԱ
 - ՓՈՂՈՑՆԵՐ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ԵՎ ԱՎՏՈԿԱՆԳԱՌՆԵՐ – 41.4 ՀԱ
- ԸՆԴԱՄԵՆԸ – 194.2 Հա

